ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2019թ.-ի ապրիլի 29-ի թիվ 07/01Լ որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի կողմից հաստատված՝ ռիսկերի վրա հիմնված Բանկի Ներքին աուդիտի 2018թ.-ի Աշխատանքային ծրագրի համաձայն, Ներքին աուդիտի կողմից կատարված ստուգումների շրջանակում իրականացվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին Բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ գնահատումներ:

Ստուգումների նպատակն է եղել գնահատել Բանկի ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը, որի նպատակով ստուգվել են Բանկի ներքին հսկողության գործուն համակարգի ներդրման և շարունակական կատարելագործման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Կատարված աշխատանքների հիմնական նպատակն է եղել բավարար հիմքերի ստեղծումը, որոնք հնարավորություն են ընձեռում արժանահավատ կերպով գնահատել Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և կազմել համապատասխան եզրակացություն, համաձայն որի Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության արդյունավետ և գործուն համակարգի շարունակական զարգացման գործընթացին:

Հիմք ընդունելով վերը նշված աշխատանքների արդյունքները՝ Ներքին աուդիտի կարծիքով 2018թ.-ի գործունեության ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի վարչության պետ /
Գլխավոր աուդիտոր՝ **Հովհաննես Հովհաննիսյան**